


“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1887

ԹԻԻ 10



ՄՈՂԹԷ ԳԱՐԼՈՑ

ՄՈՂԹԷ ԳԱՐԼՈՑ

Այս պատկերը կը ներկայացունէ երկրագնդոյս ամենէն հաճելի աեղերէն մին: Անոր դէմ կ'իշխայ լայնածաւալ Միջերկրականը: Շէնքն այն պէս գեղեցկացուցուած է դրսէն և ներսէն որ խիստ անխնայ ծախքով կրնայ ըլլալ, և անոր շուրջը կան յոյժ հազուադիւր և գեղեցիկ ծառեր և ծաղիկներ: Է՞ այն պարտա թագաւորի, թէ գոլէճ՝ իշխանաց դատարան:

րակութեանն համար: Ոչ, այն է խաղի տուն, և բոլոր անոր գեղեցկութիւնը կը գործածուի քաշել այր և կին մարդիկ դրամական և բարոյական կործանման: Գաղիոյ հարուստիքն արևելեան անկիւնը կ'իշխայ Մոնաքոյի իշխանապետութիւնը, որ է փոքրագոյն պետութիւնն Եւրոպայի: Ունի միայն 8 քառակուսի մղոն տարածութիւն, և անոր բնակիչք

քիչ աւելի են 7,000է: Մոնաքոյի իշխանապետութեան բանակը կը բաղկանայ 72 զինուորէ: Այս փոքրիկ երկրին մէջ է Մոնթէ Գարլոյի գաղինօն: Մոնաքոյի բնակչաց թիւը չորուր խաղալ հոն խաղի սեղաններուն վրայ, բայց ատոնք բաց են բոլոր օտարականաց: Կ'ըսուի թէ իշխանը տարին կ'ընդունի 770,000 լիւրա գաղինոյին վարձքէն, և իշխանապետութեան բնակիչք ազատ են ա-


մէն տուրքերէ : Գաղինոյին տէրն է Մ. Պլանք անուն մարդ մը որ առաջ ունէր նման հաստատութիւն մը Գերմանիոյ մէջ, բայց փակուեցաւ կառավարութենէն :

Կ'ըսուի թէ ձմերուան եղանակին մէջ, երբ այցելուք կու գան Մոնթէ Գարլոյ, միջին հաշուով շաբաթը մէկ անձնասպանութիւն կ'ըլլայ անոնց մէջ որ իրենց ստակը կը կորսնցունեն խաղի սեղաններուն քով : Անցեալ ձմեռ իրենք զիրենք սպանողաց մէջ կը գըտնուէր Գերմանացի մանկամարդ հարս մը : Նա և իւր այրը եկած էին Մոնաքոյ իրենց պսակուելէն քիչ ետքը, և այրը յանձնած էր իւր հարսին 1,000

պերու, որոց մէջ կ'երևէին փայլատակունք որ բոցավառ ճիւղերու կը բաժնուէին, և որոց մէջէն ականջ խլացունող որոտումները կը գոռային, արագ արագ իրարու յաջորդելով : Ճամբորդք զիտէին թէ շատ վարը կ'իջնէր անձրև հեղեղներով, բայց ուր որ կը կանգնէին, արեղակը կը ծագէր անոնց վրայ իւր բոլոր շքեղութեամբ :

Փոքրիկ աղջկան հայրը որ չունէր շատ վառվառն երևակայութիւն, ըստ անոր երբ կը նայէր իւր չորս կողմը Աստուծոյ գործոց այս փառաւոր հանդիսին վրայ անհոգ և անտարբեր աչք, « Դուսի, բան մը չկայ տեսնելու, այնպէս չէ : » Դատրիկը երկար շունչ

ժողովեամբ կարուածներու Գերմանիայէ Ամերիկա գաղթեց 1783ին մինչ էր երիտասարդ, տանելով իրեն հետ երաժշտական գործիներ հոն վաճառելու համար : Ճանապարհին վրայ հանդիպեցաւ մուշտակագործի մը, և այս դէպքն եղաւ առիթ անոր հարստութեան : Իւր երաժշտական գործիները փոխեց մուշտակներու հետ զորս տարաւ Անգղիա և վաճառեց մեծ շահով, և այդ ժամանակէն տուաւ զինք մուշտակի վաճառականութեան : Տակաւ շատցաւ հարստութիւնը մինչև որ եղաւ կարող հաստատել առևտրական կայաններ Ամերիկայի արևմտեան մասին մէջ գնել մուշտակներ Հնդիկ-



ԱՍՏՈՐԻԱ

լիրա պարունակող քսակ մը, բոլոր իւր ունեցածը, վախճալով որ գուցէ պիտի հրապուրուէր խաղալ : Մինչ դուրս կը գտնուէր նա, հարսը փորձուեցաւ խաղալ ամբողջ այն ստակով և կորսնցուց բոլորը, և երբ նորա այրը եկաւ ետ, և կը փնտուէր թէ ուր է, ահա չկար : Հարսը նետած էր զինք ծով և խեղդուած էր :

ՏԵՄՆԵԼ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Տասը տարեկան փոքր աղջիկ մը, անգամ մը ձի հեծած լերան մը գաղաթը կ'ելէր խուճի մը պարոններու և տիկնայց հետ : Ամէնքն ալ վար իջան ձիերէն, և կանգնելով լերան խորտաբորտ բարձր կատարին վրայ որ ծածկուած էր աստ և անդ դեղինի մօտ կանաչ մամուռով, չորս կողմ կը նայէին հիացմամբ : Վարը ամէն կողմ տարածուած կը տեսնուէր արծաթափայլ ծով ամ-

մը առաւ, վեր բարձրացուց իւր ձեռուրները, և պատասխանեց ակնածութեամբ, « Մ, յո, հայր, ես կը տեսնեմ փառաբանութիւնը : » Աղջկան շուրջը ամէն տեղ կը թուէր անոր թէ բնութիւնը կ'ըսէր բարձրաձայն, « Փառք և պատիւ և զօրութիւն : »

Երանի՛ անոնց որ կրնան տեսնել փառաբանութիւններ մրրկաց և փոթորկաց մէջ, և որ կրնան ըսել Սաղմուտ երգութիւն հետ, « Ով Տէր՝ քու բոլոր գործքերդ քեզ պիտի գովեն : »

ԱՍՏՈՐԻԱ

Իբր 40 տարի առաջ Նիւ Եորք քաղաքին մէջ մեռաւ մարդ մը ճոն ճէյգըրը Ասթոր անուն որ իւր մահուան ժամանակ հարստագոյն մարդն էր յԱմերիկա : Տէր էր 20,000,000 տոլարի կամ իբր 4 ու կէս միլիոն լիրայի ար-

ներէ և որսորդներէ :

Առաջին կոյանը կոչուեցաւ Ասթորիա, անոր անունով : Սա է ֆոլքլանդի գետոյն բերանը և 3,000 մղոն հեռի Նիւ Եորքէ : Ֆոլքլանդ է մեծ գետ և կը թափի Խաղաղական Ովկիանոսը : Պատկերը կը ներկայացունէ զԱսթորիան այնպէս որ էր կանխաւ : Քանի մը վաճառականաց տուներ կային գետեզեր երկայնութեամբ և գետին ետեւ կողմը լեռներ եղևնոյ անտառներով ծածկուած :

Բայց Ամերիկայի զարմանալի աճմամբ, բոլոր ասոնք փոխուած են հիմա : Փոխանակ այն քանի մը հոս հոն ցրուած տուներուն, այժմ կայ գործունեայ փոքրիկ քաղաք մը 6,000 բնակչօք, և բնակիչք փոխանակ ընելու մուշտակի վաճառականութիւն, կը զբաղին ուրիշ գործով մը : Ֆոլքլանդ գետը առատութեամբ ունի սալ-

ման կոչուած ընտիր ձուկէն , և ձուկ որսալու եղանակին որ է Ապրիլ 1է մինչև Օգոստոս 1 , աւելի քան 1,000 նաւակներ ամէն գիշեր կ'ելլեն ձկնորսութեան , իւրաքանչիւրն ունենալով երկու ձկնորս : ՅԱսթորիա կան 35 մեծ հաստատութիւններ սարմն ձուկ պատրաստելու որք կը զրկուին երկրագնաց շատ կողմերը : Այս հաստատութիւնք կը գործածեն իբր 9,000 մարդիկ : Անցեալ տարի յիշեալ ձուկերէն զրկուեցան 560,000 սնտուկ որոց իւրաքանչիւրը կը պարունակէր 48 թիթեղեայ ստուփ , և դուրս զրկուած ձկանց ամբողջ քանակութիւնն էր գրեթէ 900,000 քաշ :

ԱՆՄԱՔՈՒՐ ԽՕՍՔԵՐ

Խօսքերն են նշանք խորհրդոց և կը ցուցնեն սրտին որսխտութիւնը : Չենք կրնար խօսել չար խօսքեր առանց խորհելու չար խորհուրդներ , և չար խորհուրդներն են սերմեր որոցմէ կը բուսնին չար գործեր : Չար խորհուրդներ պահելով մեր ներսի դին , կը վնասենք մեր հոգիներուն . խօսուելով՝ անոնք կը կործանեն լսողներուն հոգիները : Չար խօսք մը և անվայել կատակ մը թերևս պիտի տպաւորի լսողին մտայ մէջ և պիտի կրկնուի ուրիշներու , որք թերևս պիտի կրկնեն զայն շատ անգամ , և պիտի մնայ այրել տոջորել զայն խօսող շրթանց մահուամբ մեծ օրումն դատաստանին ըստ պատելու համար կնքուելէն շատ ետքը :

« Բնաւ ձեր բերնէն ապականեալ խօսք մը չելլէ : » Եթէ անսուրբ կրակներ կ'այրին բուն քու հոգւոյդ մէջ , մի այրեր ուրիշներն ալ անոնց միջոցաւ : Եթէ դուն ապականեալ ես , մի թողար որ ուրիշներն ալ բռնուին քու անմաքրութեանդ ժանտախտէն :


Մէկ անվայել խօսքը շատ անգամ խօսողին վրայ դէշ համարում ունենալ կու տայ լսողին : Շատ անգամ կը լսուի , « Էս չեմ ուզեր առնչութիւն ունենալ այսպիսի խօսքեր իւր բերնէն հանողի մը հետ : » Խիստ է այս պատասխանը : Որչափ ևս առաւել ուրեմն պարտիմք սոսկմամբ մտածել ի վերայ վճռոյն այն էակին որ ըսած է , « Սրտին աւելցուքէն բերանը կը խօսի : Բարի մարդը՝ իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ . և չար մարդը՝ իր սրտին չար գանձէն չար բաներ կը հանէ , բայց ձեզի կ'ըսեմ թէ Ամէն դատարկ խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօսին , դատաստանին օրը հաշիւ պիտի տան : Ինչու որ քու

խօսքերէդ պիտի արդարանաս , և քու խօսքերէդ պիտի դատաւարաւուիս : » Մատթ . ԺԲ . 34—37 :

ԿԻՆՏ ՍՐԱՀ Ի ԼՈՆՏՈՆ

Ասկէ իբր երկու տարի առաջ կու տանդնուպոլսոյ բնակիչք համրուեցան և , թէպէտ ոչ պաշտօնապէս , ըսուեցաւ թէ անոնց թիւն էր իբր 850,000 : Բայց մինչև անգամ եթէ սեպենք , ինչպէս շատեր կը համարին , թէ մեր այս գեղեցիկ մայրաքաղաքն ունի մէկ

առաւել քան 475 տարի առաջ , բայց մեծապէս աւրեցաւ մեծ հրդեհէ մը որ հրոյ ճարակ ըրաւ քաղաքին մէկ մեծ մասը և վերստին շինուեցաւ 1789 ին : Հոս ցուցուած սրահին մէջ տեղի կ'ունենան կառավարութեան մեծ հացկերոյթները : Ամէն տարի անգամ մը Լորտ ֆաղաքապետը կոչուեցի կը հրաւիրէ Դահլիճը , և հոն կ'ըլլան բանախօսութիւններ որոց մէջ կը հետադատուին քաղաքական կացութեան կարևոր խնդիրները : Եթէ քաղաքն ընէ պատիւ օտար կառավարութեան վեր-



ԿԻՆՏ ՍՐԱՀ Ի ԼՈՆՏՈՆ

միլիոն բնակիչ , կրնայինք այսպիսի չար քաղաքներ իրար բերել և տակաւին հաւասար պիտի չըլլար Լոնտոնի :

Չարմանալի չէ՞ որ աշխարհիս մեծագոյն քաղաքը շինուած ըլլայ թէմզի նման փոքր գետոյ մը վրայ և կղզւոյ մը՝ որ չկայ Մատակասոգարի կիսուն չափ :

Լոնտոն , Մեծին Բրիտանիոյ մայրաքաղաքը , կը պարունակէ Պետութեան Խորհրդարանի շէնքերը և Թագուհւոյն պալատը : Ունի նաև շէնքեր որ կը վերաբերին քաղաքին կառավարութեան : Ներքին կողմը ասոնցմէ միայն որ կը կոչուի Կիլտ սրահ կը ցուցուի պատկերին մէջ : Նախկին շէնքը կառուցուեցաւ

բարեբող աստիճանաւորի մը , հանդէսը հոս կը կատարուի :

Շէնքին միւս մասանց մէջ կան սրահներ քաղաքին վերաբերեալ ժողովներու համար , նաև իբրև այլ և այլ դատարաններ : Շէնքն ունի իրեն կից ահագին գրքատուն մը 80,000 հատոր դիրքերով որ բաց է ամէն մարդու , ուղղը կրնայ մտնել ներս առանց բան մը վճարելու : Նաև մուսէնոն մը քաղաքին վերաբերեալ հետախնայ :

Լորտ ֆաղաքապետն ևս ունի հոն սեպհական բնակարան մը անջատ սրահէն , և կ'ընդունի տարեկան թոշակ 10,000 Անգլ . ոսկի բայց ի իւր ծախսոց որ երբեմն զրուստին : Բայց նա տարի մը միայն կը վարէ իւր պաշտօնը :

ՏՂԱՅՔ ԵՒ ՎԱՅՐԻ ԳԱՋԱՆՆԵՐ

Անթուրքի հոշակաւոր կենդանաբանական պարտիզին մէջ կը գտնուի մանուկ տղայ մը հաղիւ կարող քաւրու, որուն թոյլ կը տրուի երթալ առիւծներուն, վագրերուն և ինձերուն մէջերը և խաղալ անոնց հետ իբր թէ էին հասարակ սիրուն կատուներ: Բընաւ չվախնար անոնցմէ, կը քաշէ անոնց պոչերէն և ականջներէն, և կը խօթէ իւր փոքրիկ մատերը անոնց աչքը ինչպէս կ'ընեն մանուկները, և գաղանք բան չեն ընել անոր բայց միայն մէկգի կը քաշուին անկէ:

Կ'ըսուի թէ շատ հաճելի է տեսնել գեղեցիկ խոշոր կապոյտ աչուրներով այս մանկիկը նստած ահագին վագրին քով հանգիստ, որ թերևս իւր փոքրիկ և գիւրուկ ձեռքով կը քաշէ հրէշ կենդանւոյն թխագոյն և խայտաբղէտ մորթէն: Արդարև գեղեցիկ տեսարան կրնայ կոչուիլ այս, բայց զօրաւոր շղդերու գործ է կարող ըլլալ նայել անոր վրայ հաճոյքով, վասն զի շատերու պիտի թուի թէ վայրագ գազանը պիտի դառնայ և պատառ պատառ ընէ անմեղ մանկիկը:

Փոքրիկ մանուկը աւելի երկիրը չըզգար սակայն որ և իցէ վայրի գազաններէ քան որչափ փոքր չնիկէ մը, վասն զի նա ծնած է հոն, և այն կենդանեաց մէջ ապրած է բոլոր իւր կարճ օրերը: Իւր ոտք ելլելէն շատ ժամանակ առաջ կը տարուէր գազանաց վանդակներուն քով և թոյլ կը տրուէր անոր շոյել սիրել անոնցմէ ամենէն լաւ ընտանեացիները, և շատ չանցած դազանք հաճութեան այնպիսի նշաններ կը ցուցնէին անոր գալուն համար որ վերջապէս եղան սերտ բարեկամ, և պահապանք չէին վարաներ դնել մանկիկը վանդակին մէջ ընտանեացի ինձերուն հետ, և յետոյ առիւծուց և վագրերու հետ:

Նախ ինձերուն վրայ դրուեցաւ վըտահա թիւն, վասն զի հասարակօրէն անոնք են վայրի կենդանեաց մէջ մեղմագոյն բնութեան տէր և բաղաւտապէս հեզահաւքոյ: Ինձերու վրայ պատմութիւններ ծանօթ են թէ ազատած են իրենց պահապանները փակարանին (գազանաց ախոտ) մէջ զըտահա միւս կենդանեաց դէմ, և կը պատմուի շատ գեղեցիկ պատմութիւն մը թէ վանդակի մէջ փակուած ինձերու ձեռամբ մարդ մը և իւր դստրիկը ազատուեցան Հարաւային Ամերիկայի ընձու մը յարձակումէն որ բընաւ չընտանեցող գազաններէն է: Մարդը կը ճամբորդէր գազանները

հետ առած, բայց երբ կենդանիները ձմերոց գային, իբրև անոնց պահապան պաշտօն կը վարէր, և կ'ապրէր իւր ընտանեօք մերձակայ տնակի մը մէջ:

Հաղիւ կ'անցնէր օր մը որ չառնուր իւր փոքրիկ դուստրը և երթար տեսնել կենդանիները, և անոնք իրենց սովորութեան համաձայն այնպէս սիրեցին դստրիկն հետգհետէ, որ երբ կու գար անոնց քով, շատերը կը ցուցնէին իրենց ուրախութեան նշանք: Միայն մէկ գաղան մը կար, դաժան ինձ Հարաւային Ամերիկայի, որ չէր ուզեր բարեկամանալ, և միշտ վար կը տնկէր իւր ականջները երբ աղջիկը կը բերուէր անոր վանդակին առջև: Բայց փոքրիկը բարեկամացած էր միւս ընձուց հետ, և անոնք շատ կը հաճէին երբ նա վանդակին ձողերուն միջոցներէն կ'երկնցուէր ձեռքը շոյել և սիրել զանոնք: Բայց մարդը բնաւ չէր խորհեր աղջիկը դնել վանդակին մէջ ինձերուն քով, և հաւանականապէս բնաւ պիտի չխորհէր այդպիսի բան, եթէ միւս վայրագ ինձը չտոխպէր վնաս ընել օր մը յանկարծ:

Մարդը անդամ մը կը մաքրէր վանդակները, և այս բանը վայրագ ընձուն անհաճոյ ըլլալով, այնչափ բարկացաւ որ մարդը խոհեմութիւն համարեցաւ այլ ևս չբարկացունել զայն դստրիկը թողլով անոր վանդակին առջև: Ուստի աճապարանք անցաւ կենդանւոյն առջևէն և ստով կորող չէր դառ պիտել թէ վանդակին փակալակը այնպէս եղաւ որ դուռը կրնար դուրս բացուիլ: Հասած էր ինձերուն քով, և դստրիկն այնպէս բռնած էր որ նա կրնար հասնիլ անոնց՝ ձողերուն մէջէն, և ահա լսեց թէ թիւն դուրսէն մը տախտակամածին վրայ իւր ետը, և նայելով չորս կողմը, տեսաւ ստիկամբ որ գազանը դուրս էր ելած, և հրացայտ աչուրներով և կամայ կամաց շարժելով իւր սոյնը և մարմինը դափկած գետնին վրայ, դուռնի կը շարժէր դէպ ինքը: Այն ինչ տեսաւ գալիս, երկիրէն կորսնցուց խելքը, բայց շուտով սթափեցաւ, և այն զարմանալի արագութեամբ զոր միտքը կ'ունենայ ստիպողական պարագայից մէջ, խորհեցաւ ազատման միջոցներ: Գիտէր թէ կարող պիտի չըլլէր փախիլ ոչ մէկ և ոչ միւս դուռէն, վասն զի դուրսդարձ և առողջ կենդանին պիտի հասնէր անոր դեռ տարը քայլ չառած: Ճախարակի շուան մը կար հոն ձեղունէն կախուած մինչև դետիկն որ կը գործածուէր միւս և ուրիշ ուտեստ իջեցունելու սենեկին մէջ, և այս կու տար մարդուն ուղահովութիւն. բայց աղջիկը կը գժուարացունէր բանը: Չէր կրնար ելլել շուանին վրայ աղջիկը գրկած, և ոչ կրնար թողուլ վնաս, եւ սակայն կե-

նայ հոն՝ էր մահ երկուքին ալ: Յուսահատ՝ խորհեցաւ նետել դստրիկը ինձերուն մէջ և ապաւինել անոնց բարեկամութեան մինչ ինք հասնի չուանին եթէ չմտայ ուշ:

Գրեթէ խորհելուն հետ քաշեց դրան նիզը, վերցուց փակաղակը, բացաւ դուռը, ներս հրեց աղջիկը, գոցեց դուռը և յետոյ ցատկեց հասաւ չուանին: Բարեբաղդապէս քաջ մարմնամարդ էր մարդը, և կարող եղաւ չուանէն ձեռքերով կախուելով վեր ելլել, և արդէն բարձր կը դառնուէր, այնպէս որ դազանը կարող չեղաւ հասնել անոր երբ նետուեցաւ վեր՝ օդը, և իւր ստիկամբ ճիրաններով բռնեց չուանը ճիշդ մարդուն ոտքին ներքևէն: Մարդուն հասնելու համար քանի մը ապարդիւն ջանքերէ ետքը կատաղի գազանը ջանաց մտնել ինձերուն վանդակը, ուր սիրով հիւրընկալուած էր փոքրիկ աղջիկը, և բարեբաղդապէս ապահով մնաց մինչև որ օգնութիւն գայով դազանը զարնուեցաւ:

Հարկ չէ ըսել թէ անկէ ետև ինձերուն չպակսեցաւ անորժելի կեանքը:

ՀՈՒՄՊԵՐԹ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Երբ բարեկամ մը կը վատտիկնը, թշնամի մը կը պակսեցունենք: Երբ բնի ծանր սխալ կը գործենք խորհելով թէ իրենց և արժանապատուութիւն և անձին յարգ մերժելով տեղի տալ երբ թէ թե տարբերութիւն մը զատած է զմեզ մեր բարեկամներէն: Խտալոյ Հումպերթ թագաւորը անգամ մը ցուցուց թէ արդարև երբ թագաւոր: Օր մը նայելով պալատան պատուհաններէն տեսաւ որ կը վառէր պալատն իշխանի մը որ մերժած էր այդ օրը դալ թագաւորին քով իբրև անգամ բարեկամութեան մասնակից մը: Թագաւորն աճապարանք զնայ այրող տունը և իւր հետ դանուող աղնուակաւ նայ օգնութեամբ աշխատեցաւ բոլոր զօրութիւնով օգնել իշխանին ընտանեաց պալատով անոնց ստացուածքը երբ իշխանը և նոր ընտանիքը հասան ապահով տեղ, և իշխանը մատոյց իւր ճորհակալութիւնն առ թագաւորն, անոր վերահանձնութեան համար որով օգնեց նմա վտանգի ժամանակ:

Թագաւորը վատտեցաւ բարեկամ մը որ առաջ էր սխեթիմ թշնամի իրենց ցուցնելով թէ ինքն էր ճշմարիտ մարդ:

Ամերիկայի Մեքսիկոյի ինքնիշխան կողմէն,
Արտիստոս Գ. ԿՐԻՆ
Տնօրէն Գլխավոր Գ. Ս. ՊԱՐՆԸՄ
Ֆինանսերը Եղեցուցաւ Ամերիկան Իսն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ՊՕՍՏԱՅԱՆ